

Հավելված 2

**Տեղեկատվություն  
 ՀՀ մարզերի և այլ երկրների վարչատարածքային միավորների միջև  
 համագործակցության վերաբերյալ**

Թիվ	Համագործակցություն	Տարեթիվ	Ընթացիկ վիճակ
1	Բարեգործական ծրագիր,, Դիակոնիա,, հիմնադրամի կողմից	26.01.2018	„Սնունդօգնություն,, ծրագրի շրջանակում սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացվել է տարատեսակ սննդի պարունակությամբ արկղեր: Ծրագիրն իրականացվել է Աշտարակի և Ապարանի տարածաշրջաններում: Աշտարակում շահառուները 40 ընտանիք են, իսկ Ապարանում՝ 250
2	Համագործակցություն ՀՀ Արագածոտնի մարզի Թալին և Լեհաստանի Նիսա համայնքների ղեկավարների միջև	02.02.2018	ՀՀ Արագածոտնի մարզպետարանը Լեհաստանի Նիսա համայնքի ղեկավար Չեսլավ Բիլոբրանի գրությունը, որով հաստատվում է Նիսայի պատվիրակության այցը Հայաստան, տրամադրել է Թալինի քաղաքապետ Սարգիս Արամյանին: Նիսայի պատվիրակության այցի ընթացքում հնարավոր է քննարկել երկու համայնքների միջև համագործակցության հարցեր և նախապատրաստել կողմերի միջև համաձայնեցված համագործակցության հուշագրի ստորագրում:
3	Միացյալ Թագավորության Կառավարության հովանավորությամբ և Բրիտանական խորհրդի կողմից իրականացվող «Փոփոխության սերունդ» կրթական ծրագրի իրականացում	13.02.2018	Միացյալ Թագավորության Կառավարության հովանավորությամբ և Բրիտանական խորհրդի կողմից իրականացվող «Փոփոխության սերունդ» կրթական ծրագրի շրջանակներում Աշտարակի Սմբատ Շահազիզի անվան թիվ 2 դպրոցում տեղի է ունեցել անգլերենի ակումբի պաշտոնական բացման արարողություն: Ծրագրի նպատակն է՝ աջակցել 10- 15

			տարեկան երեխաների ուսման և հետագա կարիերայի ստեղծման հնարավորություններին՝ առաջարկելով նրանց անգլերենի արտադասարանական պարապմունքներ:
4	„Մասնակցություն Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության,, (ԳՄՀԸ) կողմից իրականացվող „Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում,, ծրագրի շրջանակում կազմակերպված „Գիտելիքի կառավարում,, միջոցառմանը	22.02.2018	Մարզպետարանի ներկայացուցիչը մասնակցել է „Մասնակցություն Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության,, (ԳՄՀԸ) կողմից իրականացվող „Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում,, ծրագրի շրջանակում կազմակերպված „Գիտելիքի կառավարում,, միջոցառմանը:
5	„ԱՄՔՈՐ Հայաստան,, բարեգործական կազմակերպության, Հայ-Կանադական „Մեփլ Լիֆ,, կլինիկայի, ՀՀ Արագածոտնի մարզպետարանի հետ համագործակցությամբ առողջապահական ծրագրի իրականացում	2018 թվականի ընթացքում	Արուճ, Ուջան, Ագարակ և Ոսկեվազ համայնքներում իրականացվում է առողջապահական ծրագիր՝ տղամարդկանց վերարտադրողական առողջության ուղղությամբ: Ծրագիրն ուղղված է տղամարդկանց մոտ շագանակագեղձի ադենոմայի և քաղցկեղի կանխարգելմանը: Մարզի բուժհաստատություններում կազմակերպվում է տղամարդկանց ուլտրաձայնային հետազոտություն և մասնագետ-ուրուլոգի խորհրդատվություն :
6	Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) Կենսաբազմազանության ինտեգրված կառավարումը Հարավային Կովկասում (ԿԻԿ) ծրագրի և ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կողմից «Էկոհամակարգային	2018 թվականի ընթացքում	Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) Կենսաբազմազանության ինտեգրված կառավարումը Հարավային Կովկասում (ԿԻԿ) ծրագրի և ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կողմից իրականացվում է «Էկոհամակարգային ծառայությունների ինտեգրումը տեղական ինքնակառավարման մարմիններում» ծրագիրը:

	Ճառայությունների ինտեգրումը տեղական ինքնակառավարման մարմիններում» ծրագրի իրականացում		
7	ՀՀ Արագածոտն մարզի Աշտարակ ու Լիբանանի Բեքքայի շրջանի Ջահլե քաղաքների միջև Եղբայրացման և համագործակցության հուշագրի ստորագրման պայմանավորվածության ձեռք բերում	05.03.2018թ.	Տեղական ինքնակառավարման ոլորտում համագործակցության զարգացման նպատակով ՀՀ Արագածոտն մարզի Աշտարակ ու Լիբանանի Բեքքայի շրջանի Ջահլե քաղաքների միջև ձեռք է բերվել Եղբայրացման և համագործակցության հուշագրի ստորագրման պայմանավորվածություն:
8	Ֆրանսիայի Բուրգ Լե Վալանս քաղաքի պատվիրակության այցը Թալին քաղաք	05.03.2018թ.	Թալինի քաղաքապետարանը հյուրընկալել է քույր քաղաք Բուրգ Լե Վալանսի պատվիրակությանը: Պատվիրակության կազմում են եղել Բուրգ Լե Վալանսի զարգացման կոմիտեի նախագահ Ժան Պիեռ Սանդոզը, հայկական ասոցիացիայի ներկայացուցիչ Ժողիաս Ջրաղացպանյանը և այլ պաշտոնատար անձինք: Քննարկվել են Թալին քաղաքի զարգացմանը միտված նոր ծրագրերի իրականացմանը վերաբերող հարցեր:
9	Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպանի այցը ՀՀ Արագածոտնի մարզ	13.03.2018	Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպանն այցելել է ՀՀ Արագածոտնի մարզի Կարբի համայնքի դպրոց, որտեղ մասնակցել է Նովրուզի կապակցությամբ կազմակերպած միջոցառմանը:
10	Արագած համայնքում Ազնվամորու և մրգերի վերամշակման արտադրամասի հիմնում՝ ՀՀ-ում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանության	23.03.2018	Արագած համայնքում բացվել է «Քաղցր Արագած» ազնվամորու և մրգերի վերամշակման արտադրամասը, որը հիմնվել է ՀՀ-ում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանության կողմից տրամադրված շուրջ 7,000 եվրո դրամաշնորհի շրջանակներում: «Արագած. քաղցր և համեղ»

	կողմից տրամադրված դրամաշնորհի շրջանակներում		արտադրատեսակները պատրաստվելու և վերամշակվելու են էկոլոգիապես մաքուր մթերքներից, պտուղներից և հատապտուղներից: Նախատեսվում է արտադրել ազնվամորու, բալի, տանձի, դդմի ու սալորի մուրաբաներ և հյութեր: Արտադրողականությունը օրական կհասնի մինչև 100 կգ-ի:
--	---	--	--